ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 125-Ա

ք.Երևան

«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի սեպտեմբերի 29-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 50 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2025 թվականի սեպտեմբերի 24-ից 26-ը տեսալսողական մեդիածառայություն մատուցող «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) կողմից հեռարձակվող «ՖԱՍԹՍՊՈՐՏՍ» տեսալսողական ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) 2025 թվականի սեպտեմբերի 23-ից 25-ն ընկած ժամանակահատվածի տեսագրությունների մշտադիտարկման արդյունքում հայտնաբերել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ:

Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2025 թվականի սեպտեմբերի 29-ին Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից կազմվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն), ըստ որի՝ 2025 թվականի սեպտեմբերի 23-ից 25-ն ընկած ժամանակահատվածում Հեռարձակողի կողմից Ծրագրով եթեր են հեռարձակվել ֆիլմեր, սակայն չի ապահովվել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում չներկայացնելով ֆիլմեր ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով:

Մասնավորապես նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ ֆիլմերը՝

23.09.2025թ.

ժամը 01:06:50 - 01:32:10 «Երազանքի թիմեր»,
ժամը 06:26:16 - 06:50:10 «Սպասումներին հակառակ»,
ժամը 06:50:13 - 07:14:24 «Սպասումներին հակառակ»,
ժամը 09:12:35 - 09:28:06 «Սպասումներին հակառակ»,
ժամը 21:56:10 - 22:01:52 «Սպասումներին հակառակ»,

ժամը 23:09:30 - 23:19:17 «Սպասումներին հակառակ».
24.09.2025թ.
ժամը 00:25:55 - 00:30:25 «Սպասումներին հակառակ»,
ժամը 07:01:50 - 07:15:18 «Սպասումներին հակառակ»,
ժամը 14:19:20 - 14:44:54 «Երազանքի թիմեր»,
ժամը 19:58:03 - 20:02:50 «Սպասումներին հակառակ».
25.09.2025թ.
ժամը 06:21:00 - 07:13:12 «Սպասումներին հակառակ»,
ժամը 11:30:44 - 11:56:15 «Երազանքի թիմեր»,
ժամը 22:10:55 - 22:26:10 «GOAT- The greatest of all time»:

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի սեպտեմբերի 29-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 50 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի սեպտեմբերի 30-ին թիվ Ե/04/04.1/764-25 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրությանն ի պատասխան 2025 թվականի հոկտեմբերի 20-ին Հանձնաժողով է ներկայացրել պարզաբանում՝ մասնավորապես նշելով՝

«(...) «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մշտապես ձգտել և ձգտում է առաջնորդվել օրենսդրության պահանջներով՝ փորձելով հնարավորինս բացառել դրանց խախտումը:

Այնուամենայնիվ, ընդունում ենք, որ Ծանուցման մեջ նշված խախտումը թույլ է տրվել «Ֆասթ Մեդիա» ՍՊԸ կողմից, և կձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր՝ խախտումը հնարավորինս կարճ ժամկետում վերացնելու ուղղությամբ:»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հեռարձակողները, որոնք եթեր են հեռարձակում նաև մանկական կամ լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող սպառողների

համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, և լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազագույն պահանջներին համապատասխան:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի «Լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումներ, ֆիլմեր ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով հեռարձակման եթերային ժամերը սահմանելու մասին» թիվ 82-Ա որոշման (այսուհետ՝ թիվ 82-Ա որոշում) 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝

«2. Տեսալսողական մեդիածառայություններ մատուցողները, որոնք եթեր են հեռարձակում նաև մանկական կամ լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, և լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ հետևյալ ձևով և եթերային ժամերին. (…)

2) լրատվական տեսալսողական հաղորդումները և ֆիլմերը ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով պետք է եթեր հեռարձակվեն ժամը՝ 17:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում, ընդ որում ժեստերի լեզվով տեսանելի թարգմանությունը կամ հայերեն ենթագիրը պարտադիր տեսանելի ձևով: (…)»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8.Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9.Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է՝

Հեռարձակողը տեսալսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքում ամրագրված դրույթների պահանջները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2023 թվականի սեպտեմբերի 23-ից (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն, լիցենզիայի սերիան, համարը՝ ԵՀ N 352, գործողության ժամկետը՝ 23.09.2023թ.- 23.09.2030թ.)

հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և, ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթները:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք, որ

«ՖԱՍԹՍՊՈՐՏՍ» տեսալսողական ծրագրով 2025 թվականի սեպտեմբերի 23-ից 25-ն ընկած ժամանակահատվածում Հեռարձակողի կողմից եթեր են հեռարձակվել ֆիլմեր, սակայն չի ապահովվել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում չներկայացնելով ֆիլմ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով:

Հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումները և բացատրությունները, ըստ որոնց՝ Հեռարձակողը հայտնել է, որ առաջնորդվելով օրենսդրության պահանջներով և փորձելով բացառել դրանց խախտումները՝ այնուամենայնիվ, ընդունում է, որ թույլ է տրվել խախտում:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը փաստացի ընդունել է իրավախախտման փաստն առ այն, որ եթեր է հեռարձակել ֆիլմեր, սակայն չի ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում չներկայացնելով ֆիլմ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է՝ Հեռարձակողի կողմից Ծրագրում հեռարձակվել են ֆիլմեր, սակայն չի ապահովվել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում չներկայացնելով ֆիլմ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ չպահպանելով Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում,
2) տուգանք,

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում,

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասը սահմանում է.

«Սույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 4-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ 82-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը, և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» 57-րդ հոդվածի 14-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 401 174 (չորս հարյուր մեկ հազար մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 30
ք.Երևան